ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
«ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

ՀՀ Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Մարշալ Բաղրամյան թաղամաս, Պուրակային 32, Հեռ. (+374 223) 7 30 03, էլ. փոստ
hrazdanibk@mail.ru

06.09.2024 N 413

Որոշում N ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0201-17, N ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0103-17
N ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0104-18
,,ԱՆՆԱՐԿԱ,,ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու
իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերավերյալ

2023 թվականի նոյեմբերի 14-ին, 2024թ հունվարի 26-ին և 2024թ մարտի 18-ին ,,Հրազդան բժշկական կենտրոն,, ՓԲԸ-ի կողմից հայտարարվել են համապատասխանաբար ,,Բժշկական նշանակության ապրանքների, ,, Դեղորայքի, ԲՆԱ-ի և Լաբորատոր ախտորոշիչ նյութերի,, ձեռք բերման նպատակով N ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0201, N ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0103 և N ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0104 ծածկագրերով մրցույթները: Մրցույթին հայտ է ներկայացրել և ընտրված մասնակից է համարվել ,,ԱՆՆԱՐԿԱ,, ՍՊԸ-ն, որի հետ էլ 12.12.2023թ, 27.02.2024թ և 17.04.2024 թ. կնքվել են N ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0201-17, N ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0103-17 և N ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0104-18 պայմանագրերը:

Աննարկա» ՍՊ ընկերության իրական շահառուն և 100 տոկոս բաժնետերը 2022 թվականի սեպտեմբերի 12-ից մինչև 2023 թվականի նոյեմբերի 23-ը հանդիսացել է Երեմ Արկադիի Սարգսյանը *(ՀԾՀ՝ 1101770244)*: Համաձայն տեղեկագրում հրապարակված տեղեկատվության՝ «Աննարկա» ՍՊ ընկերությունը 2023 թվականի փետրվարի 10-ից մինչև 2025 թվականի փետրվարի 10-ը «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի հիմքով ներառվել է գնումների գործընթացներում իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2022 թվականի սեպտեմբերի 12-ից մինչև 2023 թվականի մայիսի 11-ը Երեմ Արկադիի Սարգսյանին 100 տոկոս բաժնետիրական իրավունքով է պատկանել նաև «Էսզեթ ֆարմա» ՍՊ ընկերությունը: Համաձայն տեղեկագրում հրապարակված տեղեկատվության՝ «Էսզեթ ֆարմա» ՍՊ ընկերությունը 2023 թվականի մայիսի 6-ից մինչև 2025 թվականի հունիսի 20-ը ներառյալ ընդգրկվել է Ցուցակում: **Ցուցակում ընդգրկվելու պահի դրությամբ «Էսզեթ ֆարմա» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնետերը և իրական շահառուն հանդիսացել է նույն Երեմ Սարգսյանը:** Վերջինս, «Էսզեթ ֆարմա» ՍՊ ընկերության Ցուցակում ընդգրկվելու պահին հանդիսացել է նաև «Աննարկա» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնետերը և իրական շահառուն: Ցուցակում ընդգրկվելուց հետո Երեմ Սարգսյանը «Էսզեթ ֆարմա» ՍՊ ընկերության 100 տոկոս մասնաբաժինը օտարել է Խաչատուր Հունանյանին և համաձայն ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց

պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգի՝ 2023 թվականի մայիսի 11-ից ընկերության 100 տոկոս ուղղակի մասնակցությամբ իրական շահառու է հանդիսանում Խաչատուր Հունանյանը:

1. Հիմնավորում և եզրահանգում

Համաձայն ,,Գնումների մասին,,ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-ի ա/ ենթակետի, ՀՀ կառավարության 2017թ. Մայիսի 4-ի թիվ 526-ն որոշման 32-րդ կետի 1-ին մասի ,,բ,, պարբերության, 32-րդ կետի 19-րդ ենթակետի, 33-րդ կետի 8-րդ ենթակետի, 119-րդ կետի 2-րդ ենթակետի, 121-րդ կետի, հրավերի 8.14 կետի, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Պետական վերահսկողական ծառայության 06.08.2024թ թիվ 1828-24 և 05.04.2024թ թիվ 801-23, ՊԵԿ նախագահի, ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 21.08.2024թ. թիվ 02/10.1/05765-2024 գրությունների ,,Հրազդան բժշկական կենտրոն,,ՓԲԸ-ն հրաժարվել է պայմանագրից, համարելով այն միակողմանի լուծված:

,,Գնումների մասին,, օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե

ա/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ.» պարբերությամբ և 19-րդ ենթակետով՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ **մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց համապատասխանության մասին:**

Եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 119-րդ կետի 2-րդ ենթակետի՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրության իմաստով՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են , եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տնօրինող մասնակից,

բ. ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի խախագահ, անդամ

ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 121-րդ կետի համաձայն

ա. Մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակվելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, որոշում եմ ,,ԱՆՆԱՐԿԱ,, ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ՝ ԿԱՐԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

Կատարող՝ Լ.Նավասարդյան

☎ (077)-44-81-41